



ՀԲՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՄԱՄՎԵԼ ՃԶՄԱԶՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՈՎ
ԴԻՄԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

21.11.2014

Միրելի Բանկային աշխատողներ,



ՀՀ կառավարության 2003թ-ի որոշմամբ ազգային արժույթի ներդրման 10-ամյակի կապակցությամբ նոյեմբերի 22-ը սահմանվեց որպես ՀՀ Բանկային աշխատողի օր, ինչի առթիվ թույլ տվեք շնորհավորել Ձեզ և մաղթել ամենայն բարիք՝ առողջություն, անձնական երջանկություն և նորանոր հաջողություններ Ձեր գործունեության ասպարեզում:

ՀՀ Բանկային համակարգը, առերեսվելով նորանոր մարտահրավերների, պատվով շարունակում է իր անգնահատելի դերակատարությունը Հայաստանի

պետականության կերտման և ժողովրդի բարեկեցության բարձրացման գործում, հանդիսանալով շուկայական տնտեսության կարևորագույն անբաժանելի մասը:

Համակարգի աշխատողները շատ լավ գիտեն, որ մեր՝ շատերի համար երանելի և պատվաբեր գործի ետևում թաքնվում է քրտնաջան աշխատանք, չափազանց մեծ պատասխանատվություն, ուշադրություն և ազնվություն:

Օգտվելով առիթից իմ գոհունակությունն եմ հայտնում Հայաստանի Բանկային համակարգի բոլոր այն ներկայացուցիչներին, ովքեր մեծ նվիրումով, ամեն մեկն իր տեղում, պարտաճանաչ կատարում են իրենց գործն ի նպաստ մեր Հայրենիքի ամրապնդման ու հզորացման:



ՀՈԼԱՆԴԱԿԱՆ FMO-Ն ԿԱՐՈՂ Է ՄՏՆԵԼ ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՄԵԶ

09.10.2014



Ս.թ. հոկտեմբերի 9-ին «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն և FMO-ն (Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերությունը) կնքեցին 20 մլն ԱՄՆ դոլարի փոխարկելի ստորադաս փոխառության պայմանագիր: ՀՀ բանկային համակարգի պատմության մեջ առաջին անգամ է, որ հայկական բանկը փոխարկելի ստորադաս

փոխառություն է ներգրավում միջազգային ֆինանսական կազմակերպությունից, ինչը հայկական բանկային համակարգի հանդեպ միջազգային ներդրողների աճող վստահության խոսուն ապացույց է:

Ինչպես ընդգծեց Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության Ներդրումների և առաքելության տնօրեն Ռուուրդ Բրովերը, FMO-ն կնքել է գործարքը՝ բարձր գնահատելով Ամերիաբանկի բացառիկ բաժնետիրական կառուցվածքը, կորպորատիվ կառավարման մակարդակը և կարևորելով շարունակաբար աճող ֆինանսական ցուցանիշները՝ դրանով իսկ աջակցելով բանկին իր առաջիկա ռազմավարական նպատակների իրականացման գործում որպես կարևոր գործընկեր: Կապիտալի փոխարկվող այս երկարաժամկետ փոխառությունը կարող է էապես խթանել բանկի զարգացումը՝ նպաստելով վարկային պորտֆելի հետագա աճին: Այս գործարքի շնորհիվ FMO-ին հնարավորություն է ընձեռվում միջոցներ տրամադրել առաջատար հայկական բանկին՝ աջակցելով բանկի պրոֆեսիոնալ ղեկավար անձնակազմին և ամրապնդելով երկարաժամկետ համագործակցության հիմքերը բանկի զարգացման հաջորդ փուլում:

Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը նշեց. «Մենք շատ ուրախ ենք արժանանալ FMO-ի վստահությանը և հուսով ենք, որ մեր սերտ համագործակցությունը կշարունակվի տարիներ ի վեր, իսկ մեր համատեղ ջանքերն օգուտ կբերեն ոչ միայն մեր կազմակերպություններին, այլև ՀՀ ամբողջ բանկային համակարգին: Որոշ պայմանների առկայության դեպքում արդեն 2015թ. հունվարի 1-ից փոխառության փոխարկելի (կոնվերտացիոն) մասը \$12,5 մլն-ի չափով կարող է ուղղվել մեր կապիտալի համալրմանը»:

Իր հերթին ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանը կարևորեց Հայաստանի բանկային համակարգի կապիտալիզացիայի խնդիրն ինստիտուցիոնալ ներդրողների կողմից, ինչն օրինակ կհանդիսանա և այլ միջազգային ներդրողների համար:

ԵՏՄ-Ի ԿԱԶՄՈՒՄ ԿԱՐՈՂ Է ՍՏԵՂԾՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

15.10.2014



Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող երկները՝ Ռուսաստանը, Հայաստանը, Բելառուսը և Ղազախստանը կարող են ստեղծել ֆինանսական

կարգավորման միասնական մարմին: Այս մասին տեղեկացնում է «Ռոսիյսկայա գազետա»-ն:

Ինչպես հաղորդվում է՝ կանոնակարգող մարմնի ստեղծումը ենթադրվում է ԵՏՄ-ի ստեղծման մասին պայմանագրով: Նախատեսվում է նաև անդամ երկրներում ներդնել անդրազգային բանկային արտոնագրեր:

Այն ենթադրում է, որ մի երկրում արտոնագրված բանկը հնարավորություն կստանա գործունեության բոլոր տեսակներն իրականացնել ԵՏՄ անդամ հանդիսացող մյուս բոլոր երկրներում՝ առանց լրացուցիչ թույլտվություն ստանալու պահանջի: Այս առումով վարկային կազակերպություններին էլ վերահսկելու պարտավորությունը կարող է դրվել բանկի «տնային» երկրի հսկողություն իրականացնող մարմինների վրա:

«Եթե մենք ստեղծում ենք միասնական տնտեսական տարածություն, ապա նաև արտոնագրերը, աշխատանքի կանոնները և հսկողությունն էլ պետք է միասնական լինի», - նշել է Տարածաշրջանային բանկերի ասոցիացիայի նախագահ Անատոլի Ակսակովը:

ՀԲՄ-Ի ՀՈՒՇԱՄԵՐԱԸ՝ ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՑԱՆԻՆ

17.10.2014



Այդ օրը Հայաստանի բանկերի միության նախագահ Սամվել Ճզմաչյանը հանդիսավոր պայմաններում հանձնեց ՀԲՄ-ի «Տիգրան Մեծ» հուշամեդալը «Այլընտրանք» վերլուծական կենտրոնի ղեկավար, մի շարք հայկական և արտասահմանյան համալսարանների, այդ թվում և Ստենֆորդի, դասախոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանին: Ինչպես նշվում է պարզևի սերտիֆիկատում, հայտնի տնտեսագետը պարզևատրվում է «Հայաստանի տնտեսագիտական մտքի և ֆինանսաբանկային ոլորտի զարգացման գործում մեծ ներդրման և ակտիվ մասնակցության համար»:

Հանձնելով պարզևը, ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմաչյանն ընդգծեց Թաթուլ Մանասերյանի անգնահատելի ներդրումը հայ տնտեսական մտքի զարգացման գործում, նրա անկողմնակալությունը և ազատությունը, ինչպես նաև նրա գիտական աշխատանքների հրատապությունը: Միաժամանակ, ինչպես նշեց ՀԲՄ-ի ղեկավարը, գիտնական Մանասերյանը չի պատկանում զուտ «կաբինետային» հետազոտողների թվին, ապրում է ակտիվ հասարակական կյանքով, հայտնի է իր քաղաքացիական և զուտ մարդկային որակներով:

ՀԲՄ-ի գրասենյակում անմիջական շփման ընթացքում պարզվեց նաև, որ Թ. Մանասերյանը հետաքրքիր գրուցակից է: Մասնավորապես, չափազանց հետաքրքիր և ուսանելի էին նրա պատմությունները թուրք գիտնականների հետ իր «մարտերի» մասին գիտաժողովների և անձնական շփումների ընթացքում: Իմիջիայլոց, իր համոզմունքների և ծանրակշիռ փաստարկների շնորհիվ ընդդիմախոսներից շատերին հաջողվեց հետազայում բառացիորեն ծնկի բերել Ծիծեռնակաբերդում, որտեղ նրանք խոնարհվեցին Օսմանյան Թուրքիայում Ցեղասպանության ենթարկված անմեղ զոհերի առջև:

Հիշեցնենք նաև, որ օրեր առաջ կայացավ Թ. Մանասերյանի հիմնարար գիտական աշխատանքի՝ «Տնտեսական անվտանգություն. ռազմավարության ուրվագծեր» գրքի շնորհանդեսը: Գրքում վերլուծության առարկա են ազգային անվտանգության կարևոր բաղադրիչները, երկրի տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարության հիմնահարցերը: Ի դեպ, գրքի առաջաբանը գրել է ՌԴ նախագահի խորհրդական, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Գլազևը, ով ընդգծել է «աշխատանքի կարևոր տեսական և գործնական արժեքը»:

Նկատենք նաև, որ մինչ այդ ՀԲՄ-ի հուշամեդալը հանձնվել էր անձանց նեղ շրջանակի, որոնց թվում են Ավստրիայում (նստավայրը՝ Վիեննա) ՀՀ-ի ներկայիս դեսպան Արման Կիրակոսյանը, Ռուսաստանյան բանկերի ասոցիացիայի նախագահ Գարեգին Թոսունյանը, ներկայիս «Գազպրոմբանկի» փոխնախագահ Կարեն Կարապետյանը, տնտեսագետ Ռուբեն Ինջիկյանը և այլք:



ՔՆՆԱՐԿՎՈՒՄ Է ԵՏՄ-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ SWIFT-Ի ՀԱՄԱՐԺԵՔԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

24.10.2014



Բելառուսի, Ռուսաստանի և Ղազախստանի Կենտրոնական բանկերը քննարկում են ազգային վճարային համակարգերի ինտեգրման, ինչպես նաև դրանց հիմքի վրա SWIFT վճարային համակարգի համարժեքի ստեղծման հնարավորությունը:

է Finmarket.ru-ն, այդ մասին հայտարարել է վարչության փոխնախագահ

Ինչպես հաղորդում է Բելառուսի Ազգային բանկի Սերգեյ Դուբկովը:

Միաժամանակ, նա ընդգծել է, որ ազգային վճարային համակարգերի ինտեգրումը չի նշանակում միայն բանկային վճարային քարտերի համակարգերի միավորում: «Անհրաժեշտ է կազմակերպել նաև միջբանկային

փոխգործակցություն, այլ կերպ ասած, ստեղծել SWIFT տեղեկատվության փոխանակման և վճարումների իրականացման միջազգային համակարգի համարժեքը», - նշել է նա:

Դուբլովի խոսքերով, Բելառուսը օգտվում է SWIFT համակարգից, ինչպես և Ռուսաստանն ու Ղազախստանը, «սակայն դա չի նշանակում, որ մենք չպետք է ունենանք փոխգործակցության այլ ուղիներ, որոնք վերահսկվում են մեր կողմից և հարմարավետ են վճարային տեղեկատվության անվտանգության տեսանկյունից»:

Նա հավելել է, որ ազգային վճարային համակարգերի զարգացումն ու ինտեգրումը տրամաբանական քայլ է Եվրասիական տնտեսական միության ձևավորման շրջանակներում:



ԲԱՆԿԵՐԸ՝ ՍԱՀՄԱՆԱՄԵՐԸ ԳՅՈՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ

27.10.2014



Ս.թ. հոկտեմբերի 27-ին Հայաստանի բանկերի միության (ՀԲՄ) գրասենյակում կայացավ Հայաստանի սահմանամերձ շրջանների մի շարք միջնակարգ դպրոցների տնօրեններին համակարգչային տեխնիկայի հանդիսավոր հանձնումը: Միջոցառումն անցկացվել է «Իմ ֆինանսների միամսյակ» ակցիայի շրջանակում:

- Անձամբ ես ձեզ և ձեր համազուղացիներին իսկական հերոսներ եմ համարում, - իր խոսքում ասաց ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմաչյանը: Եվ որպեսզի Հայաստանի տարածքում գործող բանկերն ինչ-որ չափով օգտակար լինեն մեր սահմանապահ գյուղերին, որոշում ընդունվեց նրանց շահույթից գումար հավաքագրել, գնել համակարգիչներ և տպիչ սարքեր, տրամադրելով դրանք սահմանամերձ գյուղերի դպրոցներին:

ՀՀ տարածքում գործող բանկերի տրամադրած միջոցների հաշվին ձեռք է բերվել 110 համակարգիչ և 30 տպիչ սարք (պրինտեր): Նախապես, ի պատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարին հասցեագրված ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմաչյանի գրության, միությունը ստացել էր սահմանամերձ շրջանների դպրոցների վերաբերյալ տեղեկատվություն: Համակարգչային տեխնիկան տրամադրվում է հիմնականում երեք մարզերի՝ Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի, սահմանամերձ գյուղական միջնակարգ դպրոցներին:

Այդ օրը 4-6-ական համակարգիչ (կախված դպրոցի աշակերտների թվաքանակից) և մեկական պրինտեր հանձնվեցին Տավուշի մարզի 14 հանրակրթական դպրոցների տնօրեններին՝ Աչաջուր, Այգեհովիտ, Սևքար, Ագատամուտ, Կայանավան, Կողբ (երկու դպրոց), Բերդավան, Կոթի, Բաղանիս, Բարեկամավան, Տավուշ, Մովսես, Ներքին Կարմիրաղբյուր գյուղերից:

Հետագայում ակցիան շարունակվեց, և համակարգչային տեխնիկա տրամադրվեց նաև մի շարք սահմանամերձ գյուղերի դպրոցներին այլ մարզերից:



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՆԿԱՅԻՆ ԶՈՒԼԱԿՏՈՐՆԵՐ ԿԱՐՏԱԴՐՎԵՆ

29.10.2014



Արմավիսբանկի և Մենեջմենթ Միքս (Management Mix) խորհրդատվական ընկերության միջև կնքվել է Մասնավոր ներդրումների կառավարման գործունեություն իրականացնող ընկերություն հիմնադրելու վերաբերյալ մտադրությունների մասին հուշագիր:

Ինչպես հայտնել են Մենեջմենթ Միքս-ում, ընկերության հիմնական առաքելությունը ներդրողներին Հայաստանում և երկրի տարածքից դուրս ստեղծվող կամ գործող մասնավոր

առևտրային ընկերությունների կապիտալում ներդրումներ կատարելու, այդպիսի ներդրումները կառավարելու և հետագայում դրանց օտարումը կազմակերպելու գործում համալիր ծառայությունների մատուցումն է:

Ընկերության հիմնական ջանքերն ուղղված են լինելու գործընկեր հանդիսացող առևտրային ընկերությունների գործունեության ընդլայնմանը, մասնավորապես՝ տնտեսության տարբեր ոլորտներում աճի ներուժ ունեցող գործարար ծրագրերի բացահայտմանը, դրանց գնահատմանը և իրականացմանը:

«Նորաստեղծ ընկերությունը կնպաստի շուկայում նոր մշակույթի ձևավորմանը, այն է՝ մասնավոր ակտիվների կառավարումը, որն իր մեջ կամփոփի ընկերությունների կորպորատիվ կառավարման, բիզնեսի զարգացման, մրցունակության բարձրացման, նոր շուկաների ստեղծման տարրեր», - նշված է հաղորդագրության մեջ:

Հիմնադիրների հավաստմամբ, կարևորվելու են նորարարություններ և know-how տեխնոլոգիաներ պարունակող ներդրումային ծրագրերը: Նախաձեռնությունը կծառայի միջազգային ֆինանսական միջոցների ներգրավմանը, «ինչի մասին է վկայում այն հանգամանքը, որ առկա ներդրումային ֆոնդերը ձևավորվել են արտերկրյա մասնավոր ներդրողների և միջազգային ֆինանսական ընկերությունների միջոցներով»:

Չուշագիրը ստորագրվել է շվեյցարահայ գործարար, Արմավիսբանկի սեփականատեր Վարդան Սիրմաքեշի Հայաստան կատարած գործնական այցի շրջանակներում:

Նույն օրը Կենտրոնական բանկի և «Թեքնոսերտ» ընկերության միջև ստորագրվել է Հայաստանում թանկարժեք մետաղների (հիմնականում ոսկու և արծաթի) գտարկման (աֆինաժի) գործարանի ստեղծման վերաբերյալ Մտադրությունների մասին հուշագիր:

Ստորագրման արարողությանը մասնակցում էին ՀՀ Կենտրոնական Բանկի (ԿԲ) նախագահ Արթուր Զավադյանը, շվեյցարական «Ֆրանկ Մյուլլեր» ընկերության հիմնադիր, «Արմավիսբանկի» և «Թեքնոսերտ» ընկերության խորհրդի նախագահ Վարդան Սիրմաքեշը, ՀՀ-ում Շվեյցարիայի արտակարգ և լիազոր դեսպան Լուկաս Գասսերը, ՀՀ-ում Լիբանանի արտակարգ և լիազոր դեսպան Ժան Մակարոնը:

Ինչպես հայտնել են ԿԲ-ում, գործարանի հիմնական նպատակն է հանդիսանալու 999.9 հարզի բանկային ստանդարտացված ձուլակտորների

արտադրությունը և վաճառքը Հայաստանում և միջազգային շուկայում՝ Հայաստանում արդյունահանվող ոսկու և արծաթի հանքանյութի (խտանյութի) մշակումով: Գործարանի ստեղծմանն ու հետագա կառավարմանը պետք է ներգրավվեն տվյալ ոլորտում միջազգային փորձ և հեղինակություն վայելող ընկերություններ:

«Թանկարժեք մետաղների գտարկման գործարանի գործարկումը հնարավորություն կտա էականորեն բարձրացնել Հայաստանում ոսկու արդյունահանման և գտարկման ծառայությունների արդյունավետությունը: Կենտրոնական բանկի նշված նախաձեռնությունը առավել քան կարևորվում է՝ հատկապես հաշվի առնելով ոսկու ներդրումային նշանակությունը որպես կարևոր պահուստային գործիք և ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացման միջոց», - նշված է հաղորդագրության մեջ:

ԱԶՄԲ-Ը 10 ՄԼՆ ԴՈԼԱՐ Է ՀՍԿԱՑՐԵԼ ԱՐԴՉԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿԻՆ

04.11.2014



Առևտրի և Զարգացման Սնձուկյան Բանկը (ԱԶՄԲ) 10 մլն ԱՄՆ դոլարի վարկ է հատկացրել Արդշինինվեստբանկին՝ փոքր և միջին բիզնեսի վարկավորման համար: «Սա արդեն երկրորդ վարկային պայմանագիրն է՝ կնքված ԱԶՄԲ-ի և մեր բանկի միջև, ինչը վկայում է փոխադարձ վստահության մասին: Արդշինինվեստբանկը շարունակելու է կյանքի կոչել

Հայաստանում ՓՄՁ-ների զարգացմանն ուղղված իր ռազմավարությունը՝ մրցակցային պայմաններով երկարաժամկետ վարկեր հատկացնելով», - ասել է Արդշինինվեստբանկի վարչության նախագահ Մհեր Գրիգորյանը:

ԱԶՄԲ նախագահ Ուգուր Դիլիկանլըն ասել է, որ աջակցությունը ՓՄՁ-ներին բանկի ռազմավարական առաջնահերթությունն է Հայաստանում, և Արդշինինվեստբանկին հատկացվող վարկային միջոցները թույլ կտան բարելավել փոքր և միջին ձեռնարկությունների մրցունակությունը ներկայիս պայմաններում, երբ առկա է ֆինանսական միջոցների հասանելիության

Խնդիրը:

2012 թվականին Առևտրի և Զարգացման Սնծովյան Բանկը Արդշինինվեստբանկին հատկացրել էր 8 մլն ԱՄՆ դոլարի վարկ՝ հիփոթեքի ֆինանսավորման համար:

\$2.5 ՄԼՆ՝ ՎՋԵԲ-ԻՑ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԻՆ

05.11.2014



Կոնվերս Բանկը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (ՎՋԵԲ) ստացել է 5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք սինթետիկ վարկի երկրորդ տրանշը՝ 2.5 միլիոն ԱՄՆ դոլարի չափով, որը հնարավորություն կտա ապագայում ևս շահավետ պայմաններ առաջարկել ՓՄՁ-

ներին ազգային արժույթով վարկավորման համար:

«Մենք չափազանց կարևորում ենք ՎՋԵԲ-ի հետ շարունակական համագործակցությունը և միջազգային գործընկերների՝ Կոնվերս Բանկի նկատմամբ ունեցած մեծ վստահությունը: ՎՋԵԲ-ից ստացված սինթետիկ վարկի շնորհիվ բանկը կտրամադրի բարենպաստ պայմաններով երկարաժամկետ ֆինանսավորում միկրո, փոքր և միջին բիզնեսին: Քանի որ վարկերը կտրամադրվեն ՀՀ դրամով, մեր հաճախորդները պաշտպանված կլինեն արտարժույթի փոխարժեքների տատանման ռիսկերից», - ասել է Կոնվերս Բանկի գործադիր տնօրեն Տիգրան Դավթյանը:

Վերջերս Կոնվերս Բանկի համար սահմանվել է 4 միլիոն ԱՄՆ դոլար վարկային սահմանաչափ՝ ՎՋԵԲ-ի «Առևտրի աջակցության ծրագրի» շրջանակներում:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»-Ի ՈՐԱԿՅԱԼ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

10.11.2014



«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն պարզևատրվել է գերմանական Commerzbank AG-ի կողմից «Միջազգային փոխանցումների իրականացման գերազանցության որակ»-ի մրցանակով՝ 2013 թ-ին միջազգային փոխանցումների որակյալ և արագ իրականացման համար:

«Իր գործունեության ընթացքում խստագույնս հետևելով S.W.I.F.T. վճարային համակարգով փոխանցումների իրականացման միջազգային ստանդարտներին՝ Բանկը մշտապես արժանացել է արտասահմանյան կարևորագույն գործընկերների լավագույն գնահատականներին: Միջազգային փոխանցումների իրականացման ոլորտում լայն ճանաչում ունեցող ֆինանսական կառույցների կողմից նմանատիպ վստահագրերի շնորհումը բանկի մատուցած ծառայությունների որակի խոսուն երաշխիք է», - ասվում է բանկի հաղորդագրության մեջ:



ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿԻ ՆՈՐ ՎԱՐԿԱՏԵՄԱԿԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՆԱՆ

11.11.2014



Այն տրամադրվում է ԱՄՆ դոլարով կամ եվրոյով տարեկան 13% անվանական տոկոսադրույքով և մինչև 5 տարի մարման ժամկետով: Որպես գրավի առարկա կարող է հանդիսանալ անշարժ կամ շարժական գույքը: Վարկի գումարի սահմանաչափը 5 000-100 000 ԱՄՆ դոլար է կամ 4 000-80 000 եվրո:

Բոլոր այն հաճախորդներին, որոնց քարտային վարկի գումարը կգերազանցի 10 000 ԱՄՆ դոլարը կամ 8 000 եվրոն, Պրոմեթեյ Բանկը կնվիրի առողջության ապահովագրության փաթեթ:

«Արտարժույթով տրամադրվող քարտային վարկերը հնարավորություն կընձեռեն մեր հաճախորդներին կյանքի կոչելու իրենց բոլոր երազանքները: Ի հավելում, հոգալով մեր հաճախորդների առողջության մասին՝ Պրոմեթեյ Բանկը կնվիրի նաև առողջության ապահովագրության փաթեթ, որի միջոցով մեր վարկառուները կկարողանան ստանալ ամբուլատոր և հիվանդանոցային օգնություն»,- նշել է Պրոմեթեյ Բանկի Վարչության նախագահ Էմիլ Սողոմոնյանը:

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԸ \$10 ՄԼՆ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԱՐՂՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿԻՆ

11.11.2014



Евразийский Банк Развития

Եվրասիական զարգացման բանկը (ԵԱԶԲ) «Արղշինինվեստբանկ» ՓԲԸ-ի հետ վարկային պայմանագիր է կնքել, որի շրջանակներում հայկական բանկին 5 տարի

ժամկետով կտրամադրի \$10 մլն փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներին ֆինանսավորելու նպատակով:

Ինչպես հայտնեցին Եվրասիական զարգացման բանկի մամուլի ծառայությունից, Արղշինինվեստբանկը կկարողանա ինքնուրույն ընտրել իր հաճախորդներին, որոնք պետք է համապատասխանեն ԵԱԶԲ-ի հետ համաձայնեցված պահանջներին, նրանց նպատակային վարկեր տրամադրելու և փոքր ու միջին բիզնեսը զարգացնելու համար:

«Այս նախագծի իրականացումը կսատարի փոքր և միջին բիզնեսի կայուն զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը և զարգացմանը, մրցակցային միջավայրի զարգացմանը և ՓՄՁ-ների մրցունակության բարձրացմանը թե ներքին, թե արտաքին շուկաներում»,- ասվում է ԵԱԶԲ-ի հաղորդագրության մեջ:

Նախագիծն իրականացվում է ԵԱԶԲ-ի կողմից ֆինանսական ինստիտուտներին վարկային գծերի տրամադրման ճանապարհով ՓՄՁ-ների աջակցության և զարգացման ծրագրի շրջանակներում:

«Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացումն ընդհանուր տնտեսության զարգացման կարևորագույն պայմանն է, և մենք համոզված ենք, որ տվյալ նախագիծը դրական ազդեցություն կունենա այս գործընթացի վրա: Բացի այդ, 2013-2017 թթ. բանկի ռազմավարությանը համաձայն, ՓՄՁ-ների հետագա վարկավորման նպատակով բանկային սեկտորի ֆինանսավորումը Հայաստանում Բանկի գործունեության առաջնային ուղղություններից է», - ասել է Եվրասիական զարգացման բանկի Վարչության նախագահի տեղակալ Դմիտրի Կրասիլնիկովը:

«Ես բարձր եմ գնահատում այն փաստը, որ ԵԱԶԲ-ի կողմից տրամադրված միջոցները կօժանդակեն Հայաստանի մասնավոր հատվածի զարգացմանը՝ փոքր և միջին ձեռնարկություններին երկարատև վարկեր ստանալու համար ավելի լայն հնարավորություններ ընթեռնելու շնորհիվ: Այսօր ԵԱԶԲ-ն իր ուժերն է միավորում ֆինանսական խոշորագույն կազմակերպություններից մեկի հետ, որը լավ դիրքեր է զբաղեցնում տեղական շուկայում և սպասարկում է այդ թվում փոքր, միկրո ու միջին բիզնեսի հաճախորդներին: Այս պայմանագրի ստորագրումը լավ սկիզբ է ԵԱԶԲ-ի և Արդշինինվեստբանկի համագործակցության համար, որը, անկասկած, ամրապնդվելու և լայնանալու միտումներ է ունենալու», - ասաց «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ վարչության նախագահ Միկել Գրիգորյանը:

Հ.Գ. Օրերս պարզ դարձավ, որ «Արդշինինվեստբանկը» «վերադարձրել է» իր նախկին, ավանդական անվանումը՝ «Արդշինբանկ»:



ՄԻԿՐՈ ԵՎ ՓՈՔՐ ՁԵՌՆԱՐԿՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 18%-Ը ՉՈՒՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ

14.11.2014

Ըստ Հայաստանի շրջաններում միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ)՝ ֆինանսական ծառայությունների մասին իրազեկվածության, հասանելիության և դրանցից օգտվելու վերաբերյալ իրականացված ուսումնասիրության, Հայաստանում գործող միկրո և փոքր ձեռնարկությունների 18.2 %-ը չունի բանկային հաշիվ:

Ուսումնասիրության համաձայն, ձեռնարկությունների շրջանում չափազանց փոքր է նաև (14%) արտարժույթային բանկային հաշիվների առկայությունը: Առավել հաճախ ՓՄՁ-ները Հայաստանում օգտվում են հարկերի վճարման և վարկերի սպասարկման ծառայություններից:



Գյուղացիական տնտեսությունների միայն 38.8%-ն ունի բանկային հաշիվ, միևնույն ժամանակ, նրանց 79%-ն օգտվում է բանկային որևէ ծառայությունից:

Ազատ դրամական միջոցները բանկերում պահում է բոլոր ՓՄՁ-ների միայն 20%-ը: ՓՄՁ-ների 74% և անհատ ձեռներեցների 60%-ը գործունեություն է ծավալում առևտրի ոլորտում: Սրան

հաջորդում են ծառայությունների և արդյունաբերության ոլորտները:

Բոլոր ՓՄՁ-ների 51.2%-ն ունի որևէ տեսակի պարտքային պարտավորություն, ընդ որում, անհատ ձեռներեցների մոտ այդ ցուցանիշը կազմում է 52.6%, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ 46%:

«Ինչպես Հայաստանում, այնպես էլ ողջ աշխարհում ՓՄՁ-ների ֆինանսավորումը լուրջ խնդիր է հանդիսանում: Այս ուսումնասիրությունը ցույց կտա, թե ինչ է տեղի ունենում Հայաստանյան իրականությունում, ինչով են զբաղված ՓՄՁ-ները և ինչ խնդիրներ ունեն», - իր խոսքում նշել է ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի Տնտեսական զարգացման գրասենյակի տնօրեն Նարեն Չանմուգամը:

«Հետազոտության արդյունքները շատ օգտակար կարող են լինել կառավարության, Կենտրոնական բանկի և ֆինանսական մի շարք կառույցների համար: Հաշվի առնելով ներկա իրավիճակը, պետք է մտածել, թե ինչ լրացուցիչ քայլեր կարող ենք ձեռնարկել, որպեսզի ՓՄՁ-ների համար ապահովենք ֆինանսական միջոցների լրացուցիչ հնարավորություն», - ասել է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի անդամ Արմենակ Դարբինյանը:

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միությունն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ uba@uba.am: